Մրցույթ՝ «Երևանի Կ. Ասրյանի անվան թիվ 171 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տարրական դասարանների՝ դասվարի (18 դասաժամ) և կերպարվեստի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք ՝ ներկայացնել՝

- ✓ Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3 X 4 չափի,
- ✓ Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,
- ✓ Անձը հաստատող փաստաթուղթ,
- ✓ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ✓ Ինքնակենսագրություն (Ձև 5),
- ✓ Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ✓ ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- ✓ Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր / առկայության դեպքում/,
- ✓ Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. օգոստոսի 14-ից մինչև օգոստոսի 27-ը ներառյալ. ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթները տեղի կունենան 2024 թ. օգոստոսի 28-ին, համապատասխանաբար ժամը 10:30-ին և 13:30-ին՝ Երևանի Կ. Ասրյանի անվան թիվ 171 հիմնական դպրոցում, հասցե՝ Երևան, Ավան,Իսհակյան թաղամաս: Տեղեկությունների համար զանգահարել՝ 61-18-42 հեռախոսահամարով: